ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

27.12.2011թ.

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի ղեկավար Գագիկ Պետրոսյանի 2011թ. կատարած աշխատանքների մասին:

Հարգելի համագյուղացիներ, հյուրեր և ավագանու անդամներ Ձեզ եմ ներկայացնում հաշվետվությունը 2011թ. իմ կողմից Կախակն համայնքում կատարված աշխատանքների և բյուջեի կատարման մասին:

Կախակն համայնքում կա 127 տնտեսություն, ապրում են 464 բնակիչ, որոնց 90%-ը փախստականներ են:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» և Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով համայնքի ՏՀ – մարմիններին իրենց գործնեությունը հիմնականում նպատակաուղղվել է համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծման համայնքում առկա սոցիալ տնտեսական հիմնախնդիրների բարելավման ուղղությամբ:

2011թ. ընթացքում համայնքը իրականացվել է մի շարք ծրագրեր՝

2011թ. Կախակն համայնքում ներկրվել է աշնանացան ցորենի սերմացու, որը բախշվել է համապատասխան հողաբաժին ունեցող համայնքի բնակիչներին պայմանագրերով: Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքների համայնքում դեռևս կան առկա մի շարք խնդիրներ՝ խմելու ջրագծի կառուցում, համայնքը չունի մանկապարտեզ, գյուղապետարանի շենք, մշակույթի պալատ, ինչպես նաև մինչ այժմ դեռ չի գազաֆիկացվել: Վերը նշված խնդիրների լուծման համար գյուղապետարանը հնարավորություն չունի որոնք ընդգրկված են սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրով:

2011թ. ընթացքում բնակչության կողմից ստացվել է 15 դիմում տարբեր բնույթի որոնց լուծումներ տրվել են մասնակիորեն:

2011թ. ընթացքում կատարվել է ավագանու 8 նիստ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Կախակն գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 10 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 3972.56հա է, որից վարելահող-1200հա, սեփականաշնորհված - 515հա, վարձակալական 650հա:

2011թ. համայնքի բյուջեի եկամտային մաը կազմում է 21.810.200 հազար դրամ, որը կատարվել է 80%-:

Համայնքի առկա հիմնախնդիրներից են

1.Գազաֆիկացում

2.Մինչ համայնքային ճանապարհների վերանորոգում

3.Խմելու ջրի ջրագծերի կառուցում և մասնակի վերանորոգում

4.Համայնքային կենտրոնի կառուցում:

Կախակն համայնքի ղեկավար՝ Գ. Պետրոսյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

27.12.2011թ գ. Կախակն

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Կախակն համայնքի ընդհանուր ժողովը՝

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչները, ավագանու անդամները և Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչը

Ժողովի նախագահ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Կ. Սողոմոնյան

Ժողովի քարտուղար՝ Վ. Հակոբյան

ՕՐԱԿԱՐԳ

Կախակն համայնքի ղեկավար Գ. Պետրոսյանի հաշվետվությունը 2011թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին:

ԶԵԿՈՒՑՈՂԸ – մանրամասը ներկայացրեց Կախակն համայնքում 2011թ. ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունը վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ (համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է) հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակության մասնակիցներին համայնքի ավագանին և բնակիչները:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Գ. Պետրոսյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Համայնքի ղեկավար Գ. Պետրոսյանի 2011թ. կատարած ախատանքների վերաբերյալ տրված հաշվետվությունները գնահատել բավարար:
2. Պահանջները համայնքի ղեկավար Գ. Պետրոսյանի և գյուղապետարանի աշխատակազմի 2012թ. ընթացքում իրենց գործունեությունը նպատակաուղղել համայնքում, առկա հիմնախնդիրների լուծման և համայնքի բյուջեի սեփական եկամուտները հավաքագրման ամբողջական կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը:

Ժողովի նախագահ՝ Կ. Սողոմոնյան

Քարտուղար՝ Վ. Հակոբյան